«ԱՐՄԵՆԻԱ ԷՅՐՎԵՅԶ ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2022Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն 3

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 6

Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 7

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 8

Դրամական հոսքերի մասին հաշվետվություն 9

ՀՀ, Երևան 0014, Պ.Սևակ 8; Հեռ.՝ (374 60) 60 70 80, 60 71 81; info@tmaudit.am, www. tmaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Արմենիա Էյրվեյզ Ավիաընկերություն» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիա Էյրվեյզ Ավիաընկերություն» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (այսուհետ՝ ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացմումը:

Ղեկավարությանը, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Թաթուլ Մովսիսյան
Գլխավոր տնօրեն/ Առաջադրանքի ղեկավար

28 հունիսի, 2023թ.,
ք.Երևան, Պ.Սևակի 8

«Արմենիա Էյրվեյզ Ավիաընկերություն» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

'000 դրամ	*31/12/22*	*31/12/21*
Ակտիվ		
Հիմնական միջոցներ	2,215,713	2,533,788
Ոչ նյութական ակտիվներ	392	456
Հետաձգված հարկային ակտիվներ	28,342	10,828
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	***2,244,447***	***2,545,072***
Պաշարներ	116,917	64,419
Կանխավճարներ պաշարների և ծառայությունների համար	271,757	101,673
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	501,826	389,821
Այլ ընթացիկ հարկային ակտիվներ	8,274	69,465
Դրամական միջոցներ	375,581	20,008
Այլ ընթացիկ ակտիվներ	3,025	5,824
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	***1,277,380***	***651,210***
Ընդամենը ակտիվներ	***3,521,827***	***3,196,282***
Սեփական կապիտալ և պարտավորություններ		
Կանոնադրական կապիտալ	50	50
Կուտակված շահույթ (վնաս)	211,982	(114,135)
Ընդամենը սեփական կապիտալ	***212,032***	***(114,085)***
Փոխառություններ	203,160	200,721
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	***203,160***	***200,721***
Վարկեր	-	10,316
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	2,372,175	2,772,718
Կանխավճարներ ապրանքների, ծառայությունների համար	611,191	217,945
Այլ ընթացիկ հարկային պարտավորություններ	22,008	73,680
Աշխատավարձի և այլ կարճ.հատուց-ի գծով պարտ-ություններ	101,261	34,987
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	***3,106,635***	***3,109,646***
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	***3,521,827***	***3,196,282***

Տնօրեն Զերա Աբլյալինովա

Գլխավոր հաշվապահ Կարինե Զախարյան

«Արմենիա Էյրվեյզ Ավիաընկերություն» ՓԲԸ
Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

'000 դրամ	***2022***	***2021***
Հասույթ	8,136,191	3,055,982
Ինքնարժեք	(7,331,951)	(2,548,711)
Համախառն շահույթ	**804,240**	***507,271***
Այլ եկամուտներ	39,714	3,645
Իրացման ծախսեր	(538,744)	(408,094)
Վարչական ծախսեր	(248,998)	(108,589)
Դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ (հակադարձումից եկամուտներ)	(46,312)	5,029
Այլ ծախսեր	(86,192)	(6,448)
Գործառնական շահույթ (վնաս)	**(76,292)**	***(7,186)***
Ֆինանսական եկամուտներ	180	1,080
Ֆինանսական ծախսեր	-	(791)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	384,715	(6,774)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը	**308,603**	***(13,671)***
Շահութահարկի գծով ծախս (եկամուտ)	17,514	85
Զուտ շահույթ (վնաս)	**326,117**	***(13,586)***

Տնօրեն Զերա Աբլյալինովա

Գլխավոր հաշվապահ Կարինե Զախարյան

«Արմենիա Էյրվեյզ Ավիաընկերություն» ՓԲԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

'000 դրամ	*Կանոնադրական կապիտալ*	*Կուտակված շահույթ (վնաս)*	*Ընդամենը*
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	**50**	**(100,549)**	**(100,499)**
Զուտ վնաս	-	(13,586)	**(13,586)**
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.	**50**	**(114,135)**	**(114,085)**
Զուտ շահույթ	-	326,117	326,117
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2022թ.	**50**	**211,982**	**212,032**

Տնօրեն Զերա Աբլյալինովա

Գլխավոր հաշվապահ Կարինե Զախարյան

«Արմենիա Էյրվեյզ Ավիաընկերություն» ՓԲԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

'000 դրամ	*2022*	*2021*
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
արտադրանքի, ապրանքների, ծառայությունների վաճառքից	7,024,813	2,181,966
այլ ներհոսքեր	39,134	19,041
նյութերի, ապրանքների, ծառայությունների ձեռք բերումից	(5,507,455)	(1,490,295)
աշխատակիցներին և նրանց անունից կատարված վճարումից	(541,481)	(287,123)
այլ հարկերի, պարտադիր վճարների վճարումից	(573,682)	(234,238)
այլ արտահոսքեր	(25,504)	(19,746)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***415,825***	***169,605***
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
հիմնական միջոցների ձեռքբերումից	(11,662)	(128,945)
տոկոսների ստացումից	180	288
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***(11,482)***	***(128,657)***
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերից և փոխառությունների ստացումից	179,691	10,848
վարկերի և փոխառությունների մարումից	(115,029)	(109,773)
տոկոսների վճարումից	-	(790)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	***64,662***	***(99,715)***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**469,005**	***(58,767)***
արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(113,432)	(12,470)
Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի	**20,008**	***91,245***
Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի	**375,581**	**20,008**

Տնօրեն Զերա Աբլյալինովա

Գլխավոր հաշվապահ Կարինե Զախարյան